Քննարկվել և հաստատվել է ուսումնարանի

կառավարման խորհրդի 31.08 2013թ.

թիվ 28 նիստում:

Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳ նախարարության <Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի մեթոդական միավորման

Ընդհանուր դրույթներ

1. **Մեթոդական միավորումները** ստեղծվում են ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական և արտադրական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով:
2. **Մեթոդական միավորումը**՝
   - Քննարկում է հանրակրթական առարկայական և մասնագիտական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ մանկավարժներին տալիս երաշխավորություններ,
   - ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը և ներդնում աշխատանքում,
   - քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.
   - նպաստում է դասախոսների և վարպետների որակավորման բարձրացմանը,
   - կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ,
   - մանկավարժներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, ընթերցումներ,
   - սահմանված կարգով կազմակերպում է չափորոշիչների փորձարկումը
   - կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն,

- առաջարկություն է ներկայացնում հաստատության տնօրենին՝ պետական կրթական չափորոշչով նախատեսված ընտրովի և պահուստային ժամերի բաշխման վերաբերյալ,
- կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն ներկայացնում տնօրենին.
- կազմում է տարեկան նախատեսված միջոցառումների անցկացման ժամանակացույց,
- կազմակերպում է առարկայական, մասնագիտական բաց դասեր, ներուսումնարանային և միջուսումնարանային մրցույթներ, խաղեր,
- անդամները դասավանդման փորձի փոխանակման և կատարելագործման նպատակով ըստ ժամանակացույցի կատարում են դասալսումներ,
- կազմակերպում է առարկաների և մոդուլների դասավանդման դրվածքի ուսումնասիրում,
- քննարկում և կազմում է առարկայական և մասնագիտական մոդուլների ստուգարքների հարցաշարեր,
- քննարկում և կազմում է պետական ավարտական/ որակավորման քննությունների թեստեր, հարցաշարեր, հարցատոմսեր,
- քննարկում և կազմում է մոդուլների արդյունքների գնահատման միջոցները, կիսամյակային ամփոփիչ աշխատանքների թեստերը, գործնական աշխատանքները:

Մեթոդական միավորման աշխատանքի կազմակերպումը

3. **Մեթոդական միավորումը** ստեղծվում է նույն առարկայի երեք և ավելի մանկավարժների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող է ձևավորվել մասնախմբեր հարակից առարկաների մանկավարժներից:

4. Մասնախմբի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից: